Ծոցիկս է ծոցիդ սովոր, այլ ընդ ո՞ր երթայ, մէկ ասա՛:

Լ Է .

Հա՛յ իմ սերկեւիլ մորճիկ, ի՞նչ ատեն էիր սիրելու,
Չար փուշն է ի քեզ պատած, որ չըկայ ճարակ մըտնելու:
Չար փուշ պատողին ճըկրուն՝ ես հագնիմ ճօշանը կըռու,
Գամ մըտնում ու վարդ քաղեմ, թող հոգեկս ի տեղըն ելնու:

Լ Ը .

Երէկ չէ այսօր տեսայ խընձորի տալիկ մի հուսայ.
Թ'ապրիմ ի յարեւ մընամ, թէզ հանեմ շուտով ջուր ի նա,
Ջուր Յորդանանու բերեմ ու ջըրեմ որ անմահանայ,
Ի շուքըն հանգչիմ ես այլ 'ւ ի պըտղոյն վայելեմ նորա:

Լ Թ .

Գիտես որ դուն պարծեցար թէ՝ Ճերմակ ծո՛ցըս քեզ ծառայ.
Յետեւ փոշիման եղար, խըրատն ո՞վ երետ, մէկ ասա՛.
Ինձ խիփն ու ղուսալ կուզայ՝ քո ծոցուդ այլ մարդ տիրանայ,
Պագնէ զիմ պագած տեղիքն ու դընէ զերեսն ի վերայ:

Խ .

Գիշերս ես ի դուրս ելայ, թէ զիմ եարն գընտնում սիրելու.
Գընրօղն ալ ի դէմս ելաւ, լուկ նազար արաւ տանելու.
Գընրօ՛ղ, անհաւա՛տ Գընրօղ, դեռ մանուկ եմ, չեմ տանելու.
Եկո՛ւ տանելուն ցուցնեմ, տանելու զշընլին զարնելո՛ւ,
Զարախն ալ ափին ունի, ո՛չ խըմէ ո՛չ տայ խըմելու:

Խ Ա .

Թուխ աչք եւ ունքեր ունիս, լայն ճակատ, ու կարմիր երես.
Այդ ճերմակչ որ դուն ունիս, ըզշամամ ծընծերդ որ ի ներս,
Մեռնիս այլ անդին երթաս, զայդ ճերմակ ծոցիկդ ի՞նչ առնես.
Զամէն որդերընն ուտեն, դու է՞ր զիս, մահրում կու պահես:

Խ Բ .

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինիմ, կամ թէ ի՞նչ ունիմ կատարած,
Հա՛յ վա՛հ, իմ սիրած եարընն զէտ կատղած շուն ընզիս ի խած,
Կանգուն մի դանակ ունէր, անողորմ ի սընրտիս էած.
Ոչ ինքն Աստուծոյ վախեց, ոչ յիշեց օրիկ մ'աղուհաց: